

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի 30 հոկտեմբերի 2014թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ: Հրավիրվել էր նաև մասնագիտական համակարգչային լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:

*/զեկ. Մ. Ա. Զաքարյան/*

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:

*/զեկ. Ն. Ն. Դավթյան/*

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I ընթացիկ քննությունների և I ընթացիկ ստուգումների արդյունքները /ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Ձեկուցողը ամբիոններին տվեց ընդհանուր հանձնարարական, պատշաճ նախապատրաստվեն II ընթացիկ քննություններին ու ընթացիկ ստուգումներին. հատկապես հարցաշարերը տրվեն ժամանակին:

Այնուհետև ֆակուլտետի դեկան Մ. Ա. Զաքարյանը կապված ուսումնական պրոցեսի արդյունավետության հետ ներկայացրեց մի քանի հանձնարարականներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-«Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Յուզուլյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին, միաժամանակ ներկայացնելով, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ:

**ՈՐՈՇԵՑԻՆ-** 1. Հանձնարարել ամբիոններին հատուկ ուշադրություն դարձնել տեսական և գործնական նյութին, երկրորդ ընթացիկ քննություններին և ստուգումներին բարձր արդյունք ապահովելու համար:

2. Հանձնարարել ամբիոններին, որ երկրորդ ընթացիկ քննությունների հարցաշարերը ժամանակին տրվեն ուսանողներին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի համակարգչային մասնագիտական լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում գործում է համակարգչային մասնագիտական լաբորատորիա: Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման վիճակը ֆակուլտետում կայուն է: Ուսանողներին ըստ մասնագիտությունների ցուցաբերվում է խորհրդատվական աջակցություն: Ապահովվում է նաև ծրագրային և տեխնիկական անհրաժեշտությունը: Լաբորատորիայում գործում է նաև ներքին ցանց և անվճար ինտերնետ:

**ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ-** Ռ. Ռ. Քամայանը, Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը: Նրանք կարևորեցին համակարգչային մասնագիտական լաբորատորիայի դերը ֆակուլտետի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված-արդյունավետ օգտագործման գործում, միաժամանակ իրենց գոհունակությունը հայտնեցին լաբորատորիայի վարիչ Ն. Ն. Դավթյանի մասնագիտական կարողությունների, հնարավորությունների և ներդրումի մասին՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության կայացման գործում:

Համամասնաճյուղային համակարգչային լաբորատորիայի օպերատոր Բ. Վ. Օթարյանը ներկայացրեց, որ լաբորատորիայում իրականացվում են մասնաճյուղի բոլոր ֆակուլտետների նաև հեռակայի ուսումնական պարապմունքները, տրվում են մասնագիտական խորհրդատվություն: Լաբորատորիայում ապահովված է տեխնիկական հնարավորությունը: Գործում է նաև անվճար ինտերնետ:

Խորհրդի անդամները բարձր գնահատեցին ֆակուլտետի դերը մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման առաջընթացի գործում:

**ՆԱԽԱԳԱՀ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ  
Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**